Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
մայիսի 30-ի N 812 - Ն որոշման

Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ

ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կողմից վերահսկողության ընթացքում այլ պետական մարմնի լիազորություններին առնչվող խախտումների բացահայտման դեպքում տեղեկացման եղանակը և ընթացակարգը:

2. Տեսչական մարմինը վերահսկողության ընթացքում այլ պետական մարմնի լիազորություններին առնչվող խախտումների բացահայտման դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով տեղեկանք (Ձև N 1) է ներկայացնում համապատասխան պետական մարմին՝ նշելով.

1) տնտեսավարող սուբյեկտի իրավաբանական անձ լինելու դեպքում անվանումը, գտնվելու վայրը, իսկ տնտեսավարող սուբյեկտի անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում՝ անունը, հայրանունը, ազգանունը և բնակության վայրը.

2) տնտեսավարող սուբյեկտի գործունեության տեսակը.

3) տնտեսավարող սուբյեկտի գործունեության իրականացման վայրը.

4) լիցենզիայի համարը և այն տալու ամսաթիվը.

5) հայտնաբերված իրավախախտման տեսակը և դրա առնչությունը համապատասխան պետական մարմնի հետ:

3. Տեսչական մարմինն այլ պետական մարմնի լիազորություններին առնչվող խախտումների բացահայտման դեպքում տեղեկանքի հետ կարող է ներկայացնել նաև ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում պահանջած տեղեկություններ, փաստաթղթեր, պատճեններ, լուսապատճեններ և գործին վերաբերող այլ նյութեր, եթե դրանք առնչվում են համապատասխան պետական մարմնի լիազորություններին:

Ձև N 1

(ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ)

_____

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N _____

ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Տնտեսավարող սուբյեկտի անվանումը (իրավաբանական անձի անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը) _____

_____

_____

_____

2. Գտնվելու վայրը (բնակության կամ հաշվառման վայրը) _____

_____

3. Տնտեսավարող սուբյեկտի գործունեության տեսակը

_____

_____

4. Գործունեության իրականացման վայրը

_____

_____

5. Լիցենզիայի համարը և այն տալու ամսաթիվը _____
_____

6. Հայտնաբերված իրավախախտման տեսակը և դրա առնչությունը համապատասխան պետական մարմնի հետ _____
_____
_____
_____
___

(Տեսչական մարմնի ղեկավարի անունը, ազգանունը)

_____ _____

(ստորագրությունը) (ամսաթիվը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

31.05.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ